# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 70 - 71 (16368) ՇԱԲԱԹ, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՏԱՐԱԴՐԱՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ ԿՕԳՏԱԳՈՐԾՎԵՆ, ԵՎ ԲՅՈՒՋԵՆ ԷԼ ԿՎԵՐԱՆԱՅՎԻ»



*Սեպտեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին խորհրդակցություն անցկացրեց կառավարության տնտեսական թիմի հետ: Խորհրդակցությանը ներկա էր նաեւ Վրաստանի ազգային բանկի նախագահ Գիորգի Քադագիձեն:*

Ինչպես խորհրդակցության ավարտից հետո հայտարարեց վարչապետը, Ազգային բանկի, ինչպես նաեւ ֆինանսների նախարարության տվյալներով, մոտ ժամկետներում լարիի կուրսը ամրանալու է:

«Ցանկանում եմ հասարակությանը տեղեկացնել, որ վերջին մի քանի շաբաթվա ընթացքում անձամբ ղեկավարում եմ տարադրամի հարցերով համակարգման հանդիպումները: Այսօր հանդիպմանն իրենց նկատառումները ներկայացրեցին Ազգային բանկը եւ ֆինանսների նախարարությունը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՌԱԶՄԱԿԱՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Սեպտեմբերի 23-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախագահությամբ անցկացվեց ազգային անվտանգության խորհրդի նիստ:*



Նիստը, որը անցկացվեց ոչ լրիվ կազմով, քննարկեց 2016 թվականի համար Վրաստանի զինված ուժերի թվաքանակի, երկրի ռազմական վերածննդի հարցերը, ինչպես նաեւ ռազմական սպառնալիքի տեսանկյունից «2015-2018 թվականներին Վրաստանին սպառնալիքների գնահատման փաստաթղթի» նախագիծը:

Զեկուցումով հանդես եկավ Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին:

Ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունվեց որոշում վրացական զինված ուժերի թվաքանակի պահպանման վերաբերյալ (2015 թվականի հունվարի 1-ին խորհրդարանի որոշմամբ, Վրաստանի պաշտպանության նախարարության իրավասության տակ զինված ուժերի թվաքանակը 37 հազարին չպետք է գերազանցի): Թեպետ համապատասխան որոշումը չձեւակերպվեց փաստաթղթով, քանի որ դրա հաստատման համար անհրաժեշտ էր խորհրդի ութ մշտական անդամների ստորագրությունը:

Նշենք, որ Ազգային անվտանգության խորհրդի նիստին մասնակցեցին խորհրդի յոթ մշտական անդամները: Բացակայում էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ինչպես նաեւ խորհրդի մշտական անդամ հանդիսացող խորհրդականները:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎԵՐՋԻՆ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Սեպտեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու ղեկավարությամբ անցկացվեց «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի դիտորդական խորհրդի նիստը, որը քննարկեց հիմնադրամի կողմից վերջին ինն ամսվա գործունեության արդյունքները:*

Նիստում անդրադարձան մասնագիտական կրթության եւ Վրաստանի ու ԱՄՆ-ի միջեւ ձեւակերպված «Մասնագիտական կրթությունը տնտեսական զարգացման համար» նախագծի կարեւորությանը: Նիստում նշվեց, որ նախագծի նպատակն է հիմնել մասնագիտական հանրակրթական նոր ծրագրեր, որոնք համապատասխանում են աշխատանքի շուկայի պահանջներին: «Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց մի շարք հար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՀԱԿԱԹՄՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆՎԱԾ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ»



*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, ելույթ ունեցավ թմրակախվածության հիմնախնդիրներին նվիրված խորհրդաժողովում եւ հայտարարեց, որ Վրաստանում հակաթմրանյութային ռազմավարությունը հիմնված է մարդու իրավունքների վրա եւ ուղղված է թմրանյութերի օգտագործումից հասցրած վնասի նվազեցմանը:*

Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Արմատախիլ անենք շեղումը. օգնության կարիք ունեցող մարդկանց առողջության եւ իրավունքների պաշտպանության համար» նախագծի շրջանակներում անցկացվող խորհրդաժողովին մասնակցում էին նաեւ Վրաստանի օրենսդիր եւ գործադիր իշ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

*Հայաստանի անկախ Հանրապետությունը սեպտեմբերի 21-ին նշեց անկախության 24-րդ տարեդարձը:*



Հայ ժողովուրդը 24 տարի առաջ այս օրը հանրաքվեի միջոցով իր վճռական «այո»-ն ասաց Հայաստանի անկախությանը: Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությունը «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի ժողովրդավարական անկախ պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս» հարցին դրական պատասխան տվեց: Երկու օր անց՝ սեպտեմբերի 23-ին, երկրի Գերագույն Խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետություն:

Այդ օրը, ավանդույթի համաձայն, Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ այցելեց Եռաբլուրի պանթեոն, հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախության համար զոհվածների հիշատակին:

Այդ օրը՝ ի պատիվ Անկախության տոնի, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը կազմակերպեց ընդունելություն: Ընդունելությանը անցկացվեց նաեւ առանձին ոլորտներում աչքի ընկած գործիչների պարգեւատրման արարողությունը:

(Թեմայի շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Սեպտեմբերի 24-ին ազգային փոքրամասնությունների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Սոփո Շամանիդին հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների շուրջ աշխատող ոչ կառավարական 40 կազմակերպությունների,այդ թվում «Վրաստան» թերթի», Վրաստանի հայերի միության ներկայացուցիչների հետ:*



Սոփո Շամանիդին հանդիպմանը ներկայացրեց տարեկան հաշվետվությունը եւ նախագահի վարչակազմի աշխատանքի արդյունքները, ինչպես նաեւ առաջիկայի ծրագրերը:

«Վերջին տարվա ընթացքում մենք իրականացրել ենք աննախադեպ նախագծեր: Դրանցից մեկը ինտեգրման արդյունավետության բարձրացմանն ուղղված ազգային փոքրամասնություններին պետական լեզվի ուսուցման նախագիծն էր: Արդեն մեկնարկել է «Սովորե՛նք վրաց լեզուն» նախագծի երկրորդ փուլը: Դրա շրջանակներում Վրաստանի 13 շրջանների 56 գյուղերում պետական լեզուն սովորելու հնարավորություն է ընձեռվել 2500 հոգու»,- հայտարարեց Սոփո Շամանիդին:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Վրաստանի խորհրդարանի անդամները, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի աշխատակազմի ներկայացուցիչներն ու :

ԻՐԱՎԱԿԱՆ

საქართველოს იუსტიციის სამინისტრო

## ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ ԲԻԶՆԵՍԸ



*Բոլոր բիզնես-սուբյեկտների համար բիզնեսի գրանցումն անհրաժեշտություն է: Ինչպես հայտնի է, այդ գործընթացն իրականացնում է հանրային ռեեստրի հանրային գործակալությունը: Ի՞նչ պահանջներ են ներկայացվում բիզնեսի գրանցման համար, եւ ինչպե՞ս է իրականացվում այդ գործընթացը: Խմբագրության այս եւ մյուս հարցերին պատասխանում է հանրային ռեեստրի ազգային գործակալության անձի գրանցման դեպարտամենտի տվյալների մշակման ծառայության պետ ՍՈՓԻԿՈ ՃԱՎՃԱՆԻՁԵՆ:*

*- Բիզնեսի գրանցման գործընթացն իրավական տարբեր ձեւերի համար տարբեր է: Նախ, քննարկենք անհատական ձեռներեցության դեպքը: Ինչպե՞ս է վարվելու քաղաքացին, որը ցանկանում է գրանցվել՝ որպես անհատական ձեռներեց:*

- Քաղաքացին կամ նրա վստահված անձը, որը ցանկանում է գրանցվել՝ որպես անհատական ձեռներեց, պետք է ներկայանա գրանցման մարմին: Նա հանձնելու է դիմումը, որը

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԱԴՐԱՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ ԿՕԳՏԱԳՈՐԾՎԵՆ, ԵՎ ԲՅՈՒՋԵՆ ԷԼ ԿՎԵՐԱՆԱՅՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մակրոտնտեսական պարամետրերի տեսանկյունից, բոլորը համաձայն են, որ լարին հասել է իր ամենաբարձր մակարդակին ու մոտ ժամանակներում լարիի կուրսը կսկսի ամրանալ»,- հայտարարեց վարչապետը եւ երկրի բնակչությանը կոչ արեց հանգստություն պահպանել ազգային արժույթի՝ լարիի տատանումների կապակցությամբ, նշելով, որ իրադրության հետագա վատթարացում չի սպասվում:

«Ներկա փուլում ճգնաժամային շրջանն արդեն հետեւում է մնացել: Հաշվի առնելով բոլոր կանխատեսումներն ու վերլուծությունները՝ իրադրությունը պետք է կարգավորվի եւ կայունանա»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետը հասարակությանը խորհուրդ է տալիս նաեւ խուճապի չմատնվել, պահպանել հանգստություն եւ «սխալ աժիոտաժի չտրվել վրացական արժույթի փոխարժեքի կապակցությամբ»: «Այդ հարցով ֆինանսների նախարարությունը սերտորեն համագործակցում է Ազգային բանկի հետ: Գործընթացին ներգրավվել է նաեւ կառավարությունը»,- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ թե' ֆինանսների նախարարությունը եւ թե' Ազգային բանկը կուրսի կայունացման համար կօգտագործեն իրենց տնօրինության տակ եղած լծակները, անհրաժեշտության դեպքում կօգտագործվեն նաեւ ռեզերվները: «Անհրաժեշտության դեպքում ֆինանսների նախարարությունը կվերանայի նաեւ բյուջեն»,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետը նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ՁԼՄ-ներին ու փորձագետներին մեղադրեց լարիի փոխարժեքի շուրջ անպատասխանատու հայտարարություններ անելու մեջ:

Իր հերթին, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ կառավարությունը լարիի փոխարժեքի ամրապնդում է ակնկալում միջնաժամկետ շրջանում:

Հիշեցնենք, որ լարին սկսեց կտրուկ արժեզրկվել անցյալ տարվա նոյեմբերից: Կառավարությունն օտարերկրյա ներդրողների ներգրավման համար ներկայացրեց հակաճգնաժամային ծրագիր, որը քննադատվեց ընդդիմության ներկայացուցիչների կողմից:

Ամռան սկզբներին լարին կայունացավ, սակայն զգալի անկումը վերսկսվեց հուլիսի կեսից, երբ դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը հասավ 2,25 լարիի: Օգոստոսին փոխարժեքը կազմում էր 2,30-2,35: Վրաստանի ազգային բանկը սեպտեմբերի 21-ին դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը սահմանել է 2,44 լարիի մակարդակին:

# ԱԳՐԵՍԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԱՐԻԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*Վրաստանի Ազգային բանկի նախագահ Գիորգի Քադագիձեն հայտարարեց, որ իր գլխավորած գերատեսչությունն առավել ագրեսիվ քաղաքականություն է վարելու ազգային տարադրամի կայունացման համար:*

«Քանի որ ներկայումս լարին գտնվում է իր արժեքի գագաթնակետում, եւ հիմնարար գործոնները լուծված ենք համարում, ապա գտնում ենք, որ պետք է անցկացվի առավել ագրեսիվ քաղաքականություն, եւ մենք դա կիրականացնենք»,- Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպման ավարտից հետո հայտարարեց Գիորգի Քադագիձեն:

Նրա հավաստմամբ, լարիի հետագա արժեզրկման դեպքում, երկրի կառավարությունն ու Ազգային բանկը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ տարադրամի կայունացման ուղղությամբ: «Մենք լարիի հետագա անկում եւ արժեզրկում չենք սպասում, սակայն, եթե լարիի վրա ճնշումը շարունակվի, մի կողմից Ազգային բանկը կշարունակի իրականացնել դրամական ավելի ագրեսիվ քաղաքականություն, մյուս կողմից՝ կառավարությունը պատրաստակամություն է հայտնել՝ անհրաժեշտության դեպքում նվազեցնել պետական ծախսերը: Եվ երրորդը, մենք պայմանավորվել ենք անհրաժեշտության դեպքում ավարտել տարադրամային հիմնադրամի վերանայումը, քանի որ դա լուրջ ուղերձ է ներդրողների համար»,- նշեց Ազգային բանկի նախագահը:

Անդրադառնալով տարադրամային ներդրումների հարցին, Քադագիձեն ասաց, որ լարիի կուրսի վրա մեծապես անդրադառնում է երկրում ներկայումս վավերացված դոլարի անբավարարությունը: «Տարադրամային ներդրումը դա այն գլխավոր ուղերձն է, որը մենք առաքում ենք գործարարներին ու քաղաքացիներին»,- ընդգծեց Գիորգի Քադագիձեն:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎԵՐՋԻՆ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցերի վրա: Խոսքը վերաբերում է դպրոցների վերանորոգմանը, որի շրջանակներում տարածաշրջաններում իրականացվեց մոտ 30 դպրոցի լրիվ վերանորոգումը: Ինչ վերաբերում է բարձրագույն կրթությանը, ապա, Սան-Դիեգոյի համալսարանի նախագծի շրջանակներում, երեք համալսարաններում հիմնվեցին քսան նոր օբյեկտներ: Նկատի ունեմ ֆիզիկա-քիմիական լաբորատորիաները եւ էլեկտրոնային-ինժեներական լաբորատորիաները: Այսպես ավարտվեց «Մասնագիտական կրթությունը տնտեսության զարգացման համար» նորացված նախագիծը, որի շրջանակներում բաշխվեց 16 միլիոն դոլար: Մենք արդեն ստացել ենք 70 հայտ»,- հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն:



ԱՅՑ

# ԵՐԿՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Վրաստանից ԱՄՆ կմեկնի երկու պատվիրակություն: Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած պատվիրակությունը ԱՄՆ մեկնեց սեպտեմբերի 25-ին, իսկ երկու օր անց Միացյալ Նահանգներ կմեկնի Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու գլխավորած պատվիրակությունը:*

Ինչ վերաբերում է այցի շրջանակներում ծրագրված միջոցառումներին, ապա Վրաստանի վարչապետը կմասնակցի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանին եւ հոկտեմբերի 1-ին ելույթ կունենա այդ գագաթաժողովում: Բացի այդ, վարչապետը կունենա երկկողմ մի շարք հանդիպումներ, կմասնակցի նստաշրջանի շրջանակներում անցկացվող միջոցառումներին:

Ինչ վերաբերում է Վրաստանի նախագահի այցին, ապա նա կլինի Նյու Յորքում եւ Վաշինգտոնում: Մասնավորապես, Նյու Յորքում Գիորգի Մարգվելաշվիլին, Լիտվայի նախագահ Դալեյ Գրիբաուսկայտեի հրավերով, կմասնակցի «Արեւելյան Եվրոպայի ապագան. կնոջ դերի ուժեղացումը» բանավեճին: Նյու Յորքում Վրաստանի նախագահը կանցկացնի մի շարք երկկողմ հանդիպումներ: Վրաստանի նախագահի մասնակցությամբ, երկկողմ հանդիպումներ եւ հանրային ելույթներ են ծրագրված նաեւ Վաշինգտոնում: Նա ելույթ է ունենալու Վուդրո Վիլսոնի անվան կենտրոնում, հանդիպելու է իր ուկրաինացի գործընկեր Պյոտր Պորոշենկոյի հետ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

## ԴԵՍՊԱՆԻՆ ՆՎԻՐԵՑԻՆՔ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ՀԱՄԱՐԸ



***Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ շաբաթ Վրաստանում ԱՄՆ նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Յան Քելին երկրի նախագահի նստավայրում Գիորգի Մարգվելաշվիլուն հանձնեց իր հավատարմագրերը:***

***Իսկ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 21-ին, դեսպանի պարտականությունների պաշտոնական ստանձնման կապակցությամբ, Յան Քելին Վրաստանում ԱՄՆ դեսպանատանը անցկացրեց ընդունելություն, որը ծանոթության բնույթ էր կրում:***

«Ծանոթության ընդունելությանը» ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մի շարք ՁԼՄ-ների ղեկավարներ:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, ով հրավիրված էր ընդունելությանը, Վրաստանում ԱՄՆ-ի նորանշանակ դեսպանին փոխանցեց թերթի համարը, որտեղ զետեղված էր Յան Քելիի մասին հոդվածը եւ հակիրճ տեղեկատվություն հաղորդեց վիրահայերի մասին: Իր հերթին, Յան Քելին նշեց, որ իր հարազատ Չիկագոյում եւս ապրում են հայեր, եւ քաջատեղյակ է ԱՄՆ հայկական համայնքի կյանքին:

***Նկարում.- «Վրաստան» թերթը հանձնվում է Յան Քելիին եւ նրա տիկնոջը***



ԱԴՐԲԵՋԱՆ

### ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵԱՀԿ ԽՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

*Ադրբեջանի պատվիրակությունը, որը գլխավորում է այդ երկրի խորհրդարանի փոխոսնակ Բահար Մուրադովան, չի մասնակցել Ուլան Բատորում (Մոնղոլիա) ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանին:*

*Նշենք, որ ԵԱՀԿ ժողովրդավարական հետազոտությունների մարդու իրավունքների գրասենյակը սեպտեմբերի 11-ին հայտարարել էր, որ որպես դիտորդ չի մանակցելու Ադրբեջանում նոյեմբերի 1-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին այն պատճառով, որ այդ երկրում մինչ այժմ բոլոր ընտրություններն անցկացվել են ոչ թափանցիկ, խիստ խախտումներով եւ կեղծիքներով ու եվրոպական չափանիշներին ոչ համապատասխան:*

ՀՈՒՆԱՍՏԱՆ

### ԱԼԵՔՍԻՍ ՑԻՊՐԱՍԸ՝ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏ

*Հունաստանի ժամանակավոր կառավարության ղեկավար Վասիլիկի Տանու-Խրիստոֆիլուն գործերը փոխանցել է երկրի նոր վարչապետ՝ ընտրություններում հաղթած ՍԻՌԻԶԱ կուսակցության նախագահ Ալեքսիս Ցիպրասին: Գործերի հանձնման արարողությունը տեղի է ունեցել կառավարության նստավայրում՝ Մաքսիմա պալատում՝ սեպտեմբերի 21-ին Ցիպրասի երդմնակալությունից հետո:*

*Նշենք, որ ՍԻՌԻԶԱ-ն վստահ հաղթանակ է տարել սեպտեմբերի 20-ին կայացած վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում՝ ընտրողների հավաքելով ձայների 35,46 տոկոսը:*

*Հաշվի առնելով 50 լրացուցիչ մանդատների բոնուսը, որը տրվում է հաղթողին, կուսակցությունը 145 տեղ է ստացել խորհրդարանում: Նրա գլխավոր մրցակիցը՝ աջ կենտրոնամետ «Նոր դեմոկրատիան», հավաքել է ձայների 28,09 տոկոսը (75 տեղ):*

*«Անկախ հույներ» կուսակցությունը հավաքել է ձայների 3,69 տոկոսը եւ ստացել տասը տեղ: Այսպիսով, ՍԻՌԻԶԱ-ն եւ «Անկախ հույները» միասին 155 պատգամավոր կունենան խորհրդարանում, որը մեծամասնություն է ապահովում նրանց համար, քանի որ կառավարության ձեւավորումն առնվազն 151 պատգամավոր է պահանջում 300-տեղանոց միապալատ օրենսդիր մարմնում:*

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

### ՆՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԵՔՔԱՅՈՒՄ

*Սաուդյան Արաբիայի Մինա հովտում՝ Մեքքայի մերձակայքում, ուխտավորների շրջանում տեղի ունեցած հրմշտոցի զոհերի թիվը հասել է 1000-ի, վիրավորների թիվը հասել է 2000-ի:*

*Ողբերգությունը տեղի է ունեցել Մեքքայի մերձակա Մինայի հովտում՝ սատանայի քարկոծման (ռամի ալ ջամարաթ) ծիսակատարության ընթացքում:*

*Նշենք, որ մի քանի օր առաջ նույն Մեքքայում շուրջ 100 մարդ զոհվեց մզկիթի վրա վերամբարձ կռունկի ընկնելու արդյունքում:*

*Ներկայիս ողբերգությունը թագավորությունում հաջի ընթացքում խոշորագույնն է դարձել վերջին քառորդ դարում: 2006 թվականին Ջամրա կամրջին ռամի ալ ջամարաթի ժամանակ 260 մարդ էր զոհվել: Դրանից հետո սաուդյան իշխանությունները միլիոնավոր դոլարներ էին ծախսել ծիսական վայրի արդիականացման համար, որպեսզի այն առավելագույնս անվտանգ դարձնեն ուխտավորների համար:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՀԱԿԱԹՄՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆՎԱԾ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խանությունների ներկայացուցիչները, Նիդերլանդների ԱԳ նախարարության եւ դեսպանության աշխատակիցները, Հոլանդիայի, Ուկրաինայի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Քենիայի, Պակիստանի, Ինդոնեզիայի, Նեպալի եւ Հարավ Աֆրիկյան Հանրապետության ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Իր ելույթում, արդարադատության նախարարը նշեց, որ պետությունը մեծ ուշադրություն է հատկացնում թմրակախվածության մարդկանց բուժման հարցին եւ այդ նպատակով 2014 թվականից արդեն ծախսվել է 4,5 միլիոն լարի: Թեա Ծուլուկիանին խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացրեց Վրաստանի քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, ըստ որի, մեղմացվել է այն անձանց պատիժը, ովքեր մեղադրվում են թմրանյութերի ապօրինի պատրաստման, արտադրության, ձեռքբերման, պահպանման, տեղափոխման կամ առաքման համար: Թմրանյութերի վաճառողների նկատմամբ, ինչպես նախկինում, նախատեսված է ազատազրկման առավելագույն ժամկետը՝ 6-11 տարի:




ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ԴԱՎԻԹ ՍԱԳԱՆԵԼԻՁԵՆ ԳԼԽԱՎՈՐԵՑ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ



*Սեպտեմբերի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, հատուկ հրավիրված ճեպասուլիսում, Դավիթ Սագանելիձեին ներկայացրեց որպես Վրաստանի գործընկերային հիմնադրամի գլխավոր տնօրեն:*

Նա Դավիթ Սագանելիձեին բնութագրեց որպես փորձառու քաղաքագետ ու կազմակերպիչ:

Գործընկերային հիմնադրամը կարեւորագույն կառույցներից է, եւ հուսով է, որ առաջիկայում էլ նա ակտիվորեն կգործի: Ողջունում եմ այն ամենը, ինչ արվել ու արվելու է: Հիմնադրամի բազայի վրա մենք կարող ենք իրականացնել լուրջ վերափոխումներ, ստեղծել Վրաստանի զարգացման, ֆինանսավորման ինստիտուտ, որը կկարողանա ներգրավել ներդրումներ»,- հայտարարեց Դավիթ Սագանելիձեն:

Նշենք, որ մինչ այդ Դավիթ Սագանելիձեն գլխավորում էր Վրաստանի խորհրդարանի մեծամասնությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԱՆՁՆԱԳՐԵՐ. 100 ԼԱՐԻԻ ՓՈԽԱՐԵՆ՝ 70 ԼԱՐԻ

*Սեպտեմբերի 21-ին Վրաստանում մեկնարկել է հատուկ գործողություն, ըստ որի, մինչեւ հոկտեմբերի 21-ը ներառյալ, Վրաստանում կենսաչափական անձնագրերը, 100 լարիի փոխարեն, կտրվեն 70 լարիով:*

Անձնագրերը կտրվեն դիմումը ներկայացնելուց 10-րդ աշխատանքային օրը: Վերոնշյալ արտոնությունից կարող են օգտվել Վրաստանի 18 եւ ավելի բարձր տարիքի քաղաքացիները, ովքեր ունեն անձնագիրը փոխելու ցանկություն:

Ակցիայով սահմանված արտոնությունները չեն առնչվում այն անձանց, ովքեր կենսաչափական անձնագրերի ստացման համար օգտվում են օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններից (երկրորդ աշխարհամարտի մասնակիցները, Վրաստանի տարածքային ամբողջականության. ազատության եւ անկախության համար մարտական գործողություններում հաշմանդամ դարձած Վրաստանի քաղաքացիները, այն օտարերկրյա քաղաքացիները, ում, Վրաստանի սահմանադրության համաձայն, շնորհվել է Վրաստանի քաղաքացիություն, եթե այն իրականացվել է Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ, անձնագրեր ստանում են անվճար, պատերազմի եւ զինված ուժերի վետերանները եւ բռնագաղթված անձինք, բացահայտ կամ նշանակալի արտահայտված մարմնական վնասվածք ունեցող անձինք, Վրաստանի անչափահաս քաղաքացիներն անձնագրերը ստանում են 50 լարի զեղչով):

Անձնագրերը ստանալու համար քաղաքացիները կարող են դիմել Արդարադատության տան մասնաճյուղերին, պետական սպասարկումների զարգացման գործակալության տարածքային ծառայությանը, հասարակական կենտրոններին եւ էքսպրես հասարակական կենտրոններին: Անձնագրի համար անհրաժեշտ կենսաչափական լուսանկարի արժեքը կազմում է 3 լարի:

ՏԱՐԵԼԻՑ

## ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

*Հայաստանի անկախության 24-րդ տարեդարձը նշվեց Թբիլիսիի կենտրոնում գտնվող հյուրանոցներից մեկի սրահում: Վիրահայերի միություն կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառմանը հրավիրվել էին Թբիլիսիի հայ համայնքի ներկայացուցիչները:*

Միջոցառումը ներածական խոսքով բացեց Վիրահայերի միության նախագահ, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան թատրոնի դերասան Նարեկ Բայանդուրյանը:

Միջոցառմանը ելույթ ունեցան Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանք» խմբակցության ղեկավար Ռիմա Բերաձեն, բանաստեղծ-թարգմանիչներ Գիվի Շահնազարը եւ Անահիտ Բոստանջյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Պետրոս Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Էմմա Ախտյանը:

Միջոցառմանը ասմունքով հանդես եկավ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի դերասան Սամվել Էլբակյանը:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության համակարգող Կարինե Մանուկյանը, «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության նախագահ Առնոլդ Ստեփանյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը. Պ.Ադամյանի անվան պետական թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան, Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանք» խմբակցության ազգային փոքրամասնությունների հարցերով պատասխանատու Ռիտա Խիդիրբեգաշվիլին:

ՔՐԵԱԿԱՆ

## ԱԶԱՏՎԵԼՈՒՑ 24 ԺԱՄ ԱՆՑ ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ 4,5 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

*Սեպտեմբերի 19-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը նախօրյակին ազատ արձակված՝ Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային 2009-2010 թվականներին բյուջետային միջոցների վատնման գործով դատապարտեց 9 տարվա ազատազրկման: Համաներման պատճառով նա բանտում կանցկացնի 4,5 տարի:*

Նախկին քաղաքապետի դատապաշտպանները մտադիր են քաղաքային դատարանի վճիռը գանգատարկել վերաքննիչ դատարանում: Իր հերթին, Վրաստանի դատախազությունը եւս մտադիր է բողոքարկել Թբիլիսիի քաղաքային դատարանի դատավճիռը, ըստ որի, նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավան մեղավոր է ճանաչվել միայն մի միջադեպում, այն է՝ բյուջեի ծախսերում:

Դատախազությունը պնդում է, որ Ուգուլավան «Նոր Ռիղե» ՍՊԸ-ի հետ պայմանավորվածության էր հասել, որպեսզի 17 միլիոն դոլարով քաղաքին վերադարձներ Ռիղեի զբոսայգին, որը 2006 թվականին ձեռք էր բերել 7 միլիոն դոլարով: Այդ գումարից 10 միլիոնը 2009 թվականին փոխանցվել էր Ջոզեֆ Քեյին, որն այն ժամանակ «Իմեդի» հեռուստաընկերության սեփականատերն էր՝ ֆինանսական որոշակի պարտավորությունների մարման համար:

## ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ ՔՎԵՄՈ ԲՈԼՆԻՍԻԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՇԱՌԱԿԵՐ ՏՆՕՐԵՆԸ

Վրաստանի պետական անվտանգության ծառայության հակակոռուպցիոն գործակալության աշխատակիցները, անցկացված օպերատիվ հետաքննչական գործողության արդյունքում, կաշառակերության փաստով, ձերբակալել են Քվեմո Բոլնիսի գյուղի թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն Զաքիր Մ.-ին:

Զաքիր Մ.-ն քաղաքացուն, որը ուներ ընդամենը հինգ դասարանի կրթություն, առանց որեւէ քննության հանձնման, խոստացավ տալ իննամյա կրթության վկայական, դրա փոխարեն՝ որպես կաշառք պահանջելով 500 ԱՄՆ դոլար: Նա նախորոք քաղաքացուց ստացավ 250 ԱՄՆ դոլար:

2015 թվականի սեպտեմբերի 22-ին Զաքիր Մ.-ն քաղաքացուն հանձնեց վկայականը եւ վերցրեց մնացած 250 ԱՄՆ դոլարը: Գործարքի ժամանակ էլ նա ձերբակալվեց:

Իրավախախտումը նախատեսում է 6-9 տարվա ազատազրկում:



## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԿՈՒՐԲԱՆ ԲԱՅՐԱՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Վրաստանի մահմեդականներին շնորհավորեցին Կուրբան Բայրամի կապակցությամբ:*

*Իրակլի Ղարիբաշվիլին տոնի առթիվ այցելեց Թբիլիսիի կենտրոնում գործող մզկիթը: «Վրաստանը բացառիկ երկիր է, քանզի մեզ մոտ դարեր շարունակ եղբայրաբար ապրել են քրիստոնյաներ, մահմեդականներ, հրեաներ, կաթոլիկներ եւ առաքելական եկեղեցու՝ կրոնական հիմնական ուղղությունների ներկայացուցիչներ, ովքեր մեզ հետ միասին կիսել են մեր երկրի նկատմամբ տածած սերը, եւ մենք բոլորս ցանկանում ենք լինել միասնական»,- հայտարարեց երկրի վարչապետը:*

## ԻՐԱԿԼԻ ԿՈՎԶԱՆԱՁԵՆ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



*Վրաստանի խորհրդարանը ֆինանսական վերահսկողության գործակալության խորհրդի նախագահ է ընտրել գործընկերային հիմնադրամի ղեկավար Իրակլի Կովզանաձեին:*

*Օրենսդիր մարմինը յոթամյա ժամկետով «Պրոգրես բանկի» գործադիր տնօրեն Կոնստանտին Սուլամանիձեին նշանակեց ֆինանսական վերահսկողության գործակալության ղեկավար: Վերոնշյալ գործակալության խորհրդի կազմում ընտրել է նաեւ կառավարության կողմից ներկայացված Եկատերինե Գալդավային, Սաշա Թոռնեսին եւ Եփրեմ Ուռումաշվիլուն: Բացի այդ, ֆինանսական վերահսկողության գործակալության անդամների կարգավիճակ է շնորհվել նաեւ Ազգային բանկի նախագահ Գիորգի Քադագիձեին եւ փոխնախագահ Օթար Նադարաիային:*

## ՎԱՍԻԼ ՂՈՒԼՋԱՆԻՇՎԻԼԻ. ԵՎՍ ՄԵԿ ԶՈՀ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ



*Աֆղանստանում ՆԱՏՕ-ի «Վճռական պաշտպանություն» առաքելության ընթացքում պարտականությունները կատարելիս, զոհվել է վրացական բանակի զինծառայող Վասիլ Ղուլջանիշվիլին: Նա Վրաստանի զինված ուժերի 4-րդ մեքենայացված բրիգադի 43-րդ գումարտակի շարքային էր: Բացի այդ, պարեկության ժամանակ վիրավորվել է նույն այդ գումարտակի սերժանտ Պաատա Ռոստոբայան: Հայտնի է, որ զինծառայողի կյանքին վտանգ չի սպառնում:*

*Վրաստանի վարչապետի կարգադրությամբ ֆինանսների նախարարությունը զոհվածի ընտանիքին հատկացնի օրենքով նախատեսված 100 հազար լարիի չափով փոխհատուցումը, իսկ պաշտպանության նախարարությունը հոգա հուղարկավորության բոլոր ծախսերը:*

*Երեկ, սեպտեմբերի 25-ին, զոհվածի մարմինը հատուկ ինքնաթիռով բերվեց Թբիլիսի: Օդանավակայանում էին Վրաստանի նախագահ, զինված ուժերի գլխավոր հրամանատար Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելին, պաշտոնական այլ անձինք:*

ԻՐԱՎԱԿԱՆ

# ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ ԲԻԶՆԵՍԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լրացվում է տեղում էլեկտրոնային տարբերակով, օպերատորի ներկայությամբ: Դիմումը լրացնելուց հետո այն հանձնվում է քաղաքացուն, ով իր համաձայնությունը վավերացնելու է անձնական ստորագրությամբ: Դիմումի հետ միասին քաղաքացին պետք է ներկայացնի անձը ներկայացնող փաստաթուղթը:

Գործակալությունում բիզնեսի գրանցման գործընթացն էլեկտրոնային է, հետեւաբար, դիմումը ներկայացնելուց հետո, այն պատճենահանվում է եւ տեղակայվում մեր www.napr.gov.ge կայքէջում՝ բիզնես ռեեստրի էլեկտրոնային ծրագրում: Դիմումների բաշխումից հետո, այն գրանցվում է:

Գրանցողը պարտավոր է գրանցումն իրականացնել աշխատանքային մեկ օրում, իսկ քաղաքացու կողմից շտապ սպասարկման պահանջի դեպքում՝ նույն օրը: Արագ սպասարկման սակագինը 50 լարի է, իսկ մեկ օրում գրանցման իրականացման համար պետք է վճարել 20 լարի:

- ***Երբեմն պահանջվում է քաղաքացիների բիզնեսի գրանցման փաստաթղթի հաստատում: Ո՞ր դեպքում է ծագում նման անհրաժեշտություն:***

- Բիզնեսի գրանցման ժամանակ անհրաժեշտ է նշել շահագրգռված անձի իրավաբանական հասցեն: Սակայն, եթե այդ անշարժ գույքը՝ տարածքը կամ հողամասը չի պատկանում շահագրգռված անձին, ապա ծագում է գույքի սեփականատիրոջ համաձայնության կամ այլ մեթոդով պայմանավորվածության անհրաժեշտությունը, որի հիման վրա էլ անձին տրվում է գույքը՝ որպես իրավաբանական հասցե օգտագործելու իրավունք: Դրա հավաստման համար սեփականատերը պետք է ներկայանա գրանցման մարմին եւ վերոնշյալ փաստաթուղթը ստորագրի ընդունող օպերատորի ներկայությամբ: Սակայն, եթե չի կարող ներկայանալ, ապա գրանցման հարցում շահագրգռված անձը կարող է ներկայացնել նոտարի կողմից հաստատված փաստաթուղթը, ըստ որի, սեփականատերը համաձայնություն է հայտնում իր տնօրինության ներքո գտնվող գույքն օգտագործել որպես իրավաբանական հասցե: Դա կարող է իրականացվել բիզնեսի առաջնային գրանցման դիմումի հանձնման ժամանակ: Փաստաթղթի հավաստմամբ, անհրաժեշտություն ծագեց ոչ միայն անհատական ձեռներեցության, այլեւ իրավական այլ տարբերակներով գրանցման համար: Փաստաթղթի հավաստմամբ, ծառայության սակագինը 5 լարի է:

- ***Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց գրանցմանը, ապա ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ քաղաքացուն:***



- Եկեք սույն գործընթացը քննարկենք իրավական բոլոր տարբերակների համար առանձին-առանձին: Սահմանափակ պատասխանատվության ընկերության գրանցման համար, շահագրգռված անձը պետք է ներկայանա գրանցման մարմին: Այն կարող է լինել գործընկեր-բաժնետեր կամ ղեկավար-տնօրեն, ով ինարավոր է փայաբաժին չունի, կամ նրանց վստահված անձը: Քաղաքացին պետք է ներկայացնի դիմում եւ կից փաստաթղթեր: Դիմումի մեջ պետք է նշվեն այն նշանակալից թվերը, որոնք անհրաժեշտ են սուբյեկտի գրանցման համար: Դրանք են անվանումը կամ ֆիրմայի անունը, որը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները եւ ունենա ուրիշի անուն-ազգանուն, իրավաբանական հասցեն, գործընկերներին եւ նրանց բաժնեմասերը, գործընկերների անուն-ազգանունը, բնակության հասցեները եւ նրանց անձնական 11 նշանով համարները: Այլ երկրի քաղաքացիների դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել միջազգային անձնագրի տվյալները, իսկ Եվրամիության երկրների քաղաքացու դեպքում՝ բավական է անձնական տվյալների ներկայացումը:

Բացի այդ, ՍՊԸ-ն պետք է ունենա ղեկավար: Դա կարող է լինել տնօրենը, նախագահը եւ այլն: Անհրաժեշտ է միայն նշել այդ անձի անուն-ազգանունը, հասցեն եւ անձնական համարը: Իրավասությունների նշումը պարտադիր չէ, թեպետ, եթե տնօրենները մեկից ավելին են, ապա բիզնես-սուբյեկտի գրանցման ժամանակ նրանք ներկայացվելու են ՍՊԸ-ի հարցով միասին կամ առանձին-առանձին: Եթե ղեկավար է նշանակվում այն անձը, որը ՍՊԸ-ի գործընկերը չէ, ապա անհրաժեշտ է, որ նա անձամբ ներկայանա գործակալություն: Սակայն, եթե նա ներկայանալ չի կարող, ապա գրանցման հարցում շահագրգռված անձինք ներկայացնելու են նոտարի կողմից հաստատված փաստաթուղթը, ըստ որի, նա համաձայն է նշանակվել ղեկավար կամ ներկայացուցիչ:

Եթե ՍՊԸ-ի գործընկերները ցանկանում են ունենալ առեւտրի հարցում վստահված անձ, ապա նրա գրանցումը պարտադիր է, եւ դա էլ մենք ենք իրականացնում: Առեւտրական հարցերում վստահված անձի իրավասությունները գրանցվում են համապատասխան առեւտրական երաշխագրի հիման վրա, նույնը կատարվում է նաեւ բաժնետիրական ընկերության գրանցման ժամանակ, եւ ներկայացվող տվյալներն էլ նույնն են:

Ինչ վերաբերում է գործընթացին, ապա գրանցման մարմնում դիմումը լրացնում է շահագրգռված, ղեկավարությունում կամ ներկայացուցչությունում իրավասու անձը, հիմնադիրը կամ դրանց վստահված անձը: Դիմումը լրացվում է էլեկտրոնային տարբերակով՝ հենց տեղում: Ընդ որում, մենք իրավաբանական անձանց ընձեռում ենք կանոնադրության ներկայացման ինարավորություն եւ, որպեսզի գործընթացը լինի թափանցիկ, կայքէջում իրավաբանական բոլոր տարբերակների համար ունենք տեղակայված կանոնադրության օրինակը, որպեսզի շահագրգռված անձինք կարողանան դյուրությամբ լրացնել:

Հիմնադիրների կողմից գրանցման դիմումի ստորագրումն իրականացվում է ընդունող օպերատորի ներկայությամբ կամ թույլատրելի է նոտարի կողմից հավաստագրված փաստաթուղթը ներկայացնելը: Հատկանշական է, որ բիզնեսի առաջնային գրանցման ժամանակ գրանցման փաստաթղթի վրա պետք է լինեն բոլոր հիմնադիրների ստորագրությունները, եւ դա պարտադիր է իրավական բոլոր տարբերակների համար:

Ինչպես գիտեք, ունենք իրավական այլ տարբերակներ, օրինակ, ընդհանուր պատասխանատվության ընկերություններ, որոնք շատ հազվադեպ են կազմավորվում: Նման դեպքերում, ներկայացվող տվյալներում տարբերությունն այն է, որ սուբյեկտի ֆիրմայի անվան մեջ պարտադիր կարգով պետք է վավերացվի գործընկերներից մեկի անուն-ազգանունը: Սակայն, եթե այդ գործընկերը իրավաբանական անձ է, ապա՝ ֆիրմային անվանումը: Բավականին հազվադեպ է պատահում նաեւ կոմանդիտուրային ընկերության գրանցումը, որը կարող է սահմանափակ կամ անսահմանափակ թվով գործընկերներ: Այդ դեպքում, ֆիրմայի անվան մեջ պետք է վավերացվի լիարժեք գործընկերներից մեկի անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ֆիրմային անվանումը, թեպետ իրավական նման տարբերակի գրանցման ժամանակ պարտադիր կարգով պետք է նշվի սահմանափակ գործընկերների բաժնեմասը:

Գործակալությունը գրանցում է նաեւ կոոպերատիվներին: Նման դեպքերում, առանձին ընթացակարգերում գրեթե նույնն են. գրանցող մարմին պետք է ներկայացվեն տվյալներ գործընկերների ներկայացուցչության իրավասություններով անձանց վերաբերյալ, նրանց անուն-ազգանունները, հասցեները, անձնական համարները, կոոպերատիվի ֆիրմային անվանումը եւ իրավաբանական հասցեն: Նշենք, որ գյուղատնտեսական կոոպերատիվների գրանցման կարգը մի փոքր այլ է:

- ***Ինչո՞վ է արտահայտվում այդ տարբերությունը:***

- Նախ հարկ է նշել, որ գյուղատնտեսական կոոպերատիվի գրանցում կարող է իրականացնել Վրաստանի քաղաքացին կամ Վրաստանում գրանցված գյուղատնտեսական կոոպերատիվը: Գյուղատնտեսական կոոպերատիվը ենթակա է տարբերակվող կարգավորման: Մենք հուշագիր ենք ձեւակերպել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալություն ՀԻԻԱ-ի հետ, որը շնորհում է գյուղատնտեսական կոոպերատիվների կարգավիճակը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

# ԾՆՈՂՆԵՐԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՎԱՔԵԼԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

***Ինչպես հայտարարեց Վրաստանի գիտության եւ կրթության նախարար Թամար Սանիկիձեն, աշակերտների ծնողները չպետք է գումարներ ծախսեն դպրոցի կարիքների համար, քանի որ դա անմիջականորեն կրթության եւ գիտության նախարարության պարտականությունն է:***



Նախարարը վրդովմունք հայտնեց այն կապակցությամբ, որ հանրային դպրոցներում աշակերտների ծնողները փող են հավաքում առանձին պիտույքների, այդ թվում՝ զուգարանի թուղթ գնելու համար: «Դա աննորմալ երեւույթ է, նման բան դպրոցում չպետք է լինի: Բոլոր ծախսերը, որոնք կապված են դպրոցներում ուսուցման եւ ուսումնական գործընթացի հետ, մեր իրավասությունն է, պետության իրավասությունը»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

Եթե դպրոցը լրացուցիչ ֆինանսավորման կարիք ունի, այն պետք է դիմի նախարարությանն առընթեր ստեղծված հատուկ հանձնաժողովին:

«Ես խնդրում եմ եւ բոլորին կոչ եմ անում թույլ չտալ նման միջադեպեր, եթե կա անհրաժեշտություն, ապա պետք է դիմել նախարարությանը: Ծնողները պարտավոր չեն լրացուցիչ գումարներ վճարել»,- ընդգծեց Թամար Սանիկիձեն:

Եթե նման միջադեպեր լինեն դպրոցում, ապա նախարարը կոչ արեց անմիջականորեն ահազանգել նախարարությանը: Ընդ որում, նախարարության կողմից, համապատասխան վերահսկողությունն արդեն մեկնարկել է եւ նման խախտման բացահայտման դեպքում, դպրոցի աշխատակիցը կնախազգուշացվի կամ կհեռացվի աշխատանքից:

# ՆՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն Է

***Ինչպես տեղեկացրել են, ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը նոր սխեմայով ուսուցիչների գործունեությունն սկսելու, մասնագիտական զարգացման ու պաշտոնական առաջընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը սեպտեմբերի 30-ն է:***

Կենտրոնի տվյալներով, բոլոր ուսուցիչները նոր սխեմայում ներառվում են ավտոմատորեն, իսկ այն ուսուցիչների համար, որոնք ներառված էին 2011-2014 թվականների հին սխեմայում, փաստաթղթերի ընդունման ժամկետը սպառվեց սեպտեմբերի 21-ին:

Հիշեցնենք, որ գործունեությունն սկսելու մասնագիտական զարգացման եւ պաշտոնական առաջընթացի նոր սխեման Վրաստանի հանրային դպրոցներում մեկնարկել է նոր ուսումնական տարվանից:

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՓՈԽՎԵԼ ԵՆ

***Կրթօջախների միջեւ աշակերտների տեղափոխման կանոններում փոփոխություններ են կատարվել:***

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, տեղափոխումների վերաբերյալ համապատասխան փոփոխությունները կիրականացվեն անհատական կարգով այն հանրակրթական հաստատություններում, որտեղ ուսուցումը սկսվում է պետականորեն սահմանված օրերի տարբերությամբ: Փոփոխություններն առնչվում են միայն առաջին ուսումնական տարվան:

Ինչպես տեղեկացրել ենք, այս տարի հանրային դպրոցներում ուսումնական տարին մեկնարկեց սեպտեմբերի 14-ին: Եթե դպրոցներից մեկը ուսուցումը սկսել է ավելի ուշ, ապա այն ուսուցման առաջին տարում չի կարողանա ավտոմատորեն առանց նախարարության թույլտվության իրականացնել աշակերտների տեղափոխություններ: Վերոնշյալ փոփոխությունը վերաբերում է նաեւ այն մասնավոր դպրոցներին, ովքեր 5-ամյա երեխաներին դպրոց ընդունելու նպատակով, ուսումնական տարին սկսել են ավելի ուշ: «Հանրակրթական այն հաստատություններում, որտեղ ուսումնական տարին պետականորեն սահմանված օրվանից ավելի ուշ է մեկնարկել, ուսումնական առաջին տարում աշակերտների ավտոմատ տեղաշարժեր չեն լինի, այն ինարավոր է միայն անհատական կարգով»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն: Նրա խոսքերով, նախկին պրակտիկայից հիմնականում տուժում էր մասնավոր հատվածը: «Երբ ծնողը ուսումնական տարվա սկսվելուց երկու-երեք անց մասնավոր դպրոցից ցանկանում է երեխաներին տեղափոխել հանրային դպրոց, ապա դրանից տուժում է մասնավոր հատվածը»,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ վերոնշյալ փոփոխությունն անմիջականորեն առնչվում է մասնավոր հատվածից հանրային դպրոցներ առաջին դասարանցիների արհեստական տեղափոխությունների կանխմանը: